«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Քննադատական մտածողության ձևավորումն ու զարգացումը

Գրականության ուսուցման գործընթացում

Հետազոտող ուսուցիչ՝ Նաիրա Գաբրիելյան

Մենթոր ուսուցիչ՝ Հ.Պողոսյան

<<Եղեգնուտի միջնակարգ դպրոց >>ՊՈԱԿ

ԱՐՄԱՎԻՐ- 2023

Բովանդակություն

Նախաբան. 3

Գրական ակնարկ. 5

Գործնական համատեքստ …….....9

Ամփոփում……13

Գրականության ցանկ. . . . . ……. 14

Հավելված……15

Նախաբան

«Աշակերտը ոչ թե սափոր է, որ պետք է լցնել գիտելիքներով, այլ ջահ է, որը պետք է վառել» Մ. Ֆ. Քվինթիլիանոս, իսկ վառված ջահը որտեղ էլ որ թաքցնես, միևնույն է, կլուսավորի խավարը;Այսօր մեզ այսպիսի սերունդ է պետք՝տեղեկացված, պայքարող, խելացի ու հաղթող: Այսպիսի սերունդ դաստիարակելու համար ուսուցիչը պետք է զիված լինի ժամանակակից <<զենքերով>>;Ըստ իս՝ ժամանակակից զինքեից մեկն էլ քննդատական մտածողությունն է: Քննադատական մտածողությունը մտածելու մի եղանակ է, որը պահանջում է կարդալ, ընկալել տրված նյութը, որից հետո մտածել դրա մասին, վերլուծել, համեմատել, գնահատել, գտնել այդ նյութի կապը կյանքի հետ, կյանքում դրա կիրառման հնարավորությունը: Քննադատական մտածողության ձևավորումն ու զարգացումն այսօր հանդիսանում է կրթության գլխավոր նպատակներից մեկը: Այս հետազոտության նպատակն է ստեղծել հիմք ձևավորելու քննադատական մտածողություն զարգացնող կրթական համակարգ, որն իր հերթին կարող է գործիք հանդիսանալ ինքնության հիմքի վրա ծագող կոնֆլիկտների կանխման, կարգավորման և հաշտեցման համար: Այսօր հաճախ է շեշտվում այն մոտեցումը, որ դպրոցի նպատակը միայն գիտելիքի տրամադրումը չէ:Այն ունի առավել բարդ առաքելություն՝ ձևավորել սերունդ, որն ունի ինքնուրույնություն քննադատաբար մտածելու իրական կյյանքում գոյություն ունեցող խնդիրների շուրջ: Քննադատական մտածողությունը նպաստող հմտությունների զարգացումը կարևորում է ժողովրդավարական հասարակության ձևավորման և ժողովրդական արժեքների պահպանման տեսանկյունից: Քննադատական մտածողությունն իրենից ներկայացնում է տեղեկատվությունը վերահիմաստավորելու և ձևավորելու բարդ գործընթաց, որը կատարվում է գաղափարներն ու միջոցները ստեղծագործաբար համադրելու միջոցով: Դրա կիրառումը հնարավոր է բոլոր տարիքներում: Ապագան պատկանում է նրանց, ովքեր կկարողանան տեղեկատվությունը քննադատաբար վերլուծել և կերտել սեփական ճշմարտությունը: Քննադատական մտածողությունը ինքնուրույն մտածողություն է: Քննադատորեն մտածող մարդն առանց քննարկելու, բանավիճելու այնքան էլ հաճախ չի կիսում մեկ ուրիշի տեսակետը: Նա կարողանում է մտածել և ինքնուրույն, ազատ ու անկաշկանդ արտահայտել իր կարծիքները: Քննադատական մտածողությունը ուսուցման համակարգում նոր մոտեցում է, որը վերջին տարիներին լայն տարածում է գտել: Այս մոտեցումը միաժամանակ հին պատմական արմատներ ունի: Քննադատական մտածողության զարգացման մեջ մեծ ավանդ ունեն ամերիկյան մանկավարժներ Ջինի Լ. Սթիլը, Քուրթիս Ս. Մերեդիթը, Չարլզ Թեմփլը և այլոք: Քննադատական մտածողություն եզրույթն առաջին հայացքից բացասական երանգ է պարունակում, քանզի այն զուգորդվում է քննադատել բառին: Սակայն այս բառը ներառում է քննել և դատել բառ–հասկացությունները: Այսինքն, իմաստն է՝ որևէ հարց քննել, զննել տարբեր տեսանկյուններից, ապա դատել և եզրահանգում կատարել: Այս համագործակցության նպատակն ամբողջ ուսումնական ծրագրի ընթացքում և բոլոր տարիքների աշակերտների համար նորամուծել քննադատական մտածողություն

ձևավորող ու խթանող դասավանդման մեթոդներ։ Աշխարհի՝ հետզհետե բազմաբարդ դառնալուն և ժողովրդավարության առավել տարածվելուն զուգընթաց ակնհայտ է դառնում, որ երիտասարդներից, ավելի քան երբևէ, պահանջվում է բարդ խնդիրներ լուծելու, հանգամանքները քննախույզ դիտարկելու, այլընտրանքային կարծիքները քննելու և լրջմիտ ու խելացի որոշումներ կայացնելու կարողություն։ Ակնհայտ է նաև, որ քննադատաբար մտածելը հմտություն է, որ կարող է ձևավորվել և զարգանալ ուսումնական բարենպաստ միջավայրում:**Յուրաքանչյուր ուսուցչի գերխնդիրն է սովորել սովորեցնելը:** Սեփական դասապրոցեսում օգտագործում եմ հետևյալ վարկածը, որպեսզի կարողանամ վեր հանել քննադատական մտածողության վերաբերող ցանկացած խնդիր և տալ համապատասխան լուծում, որպեսզի աշակերտը կարողանա հեշտությամբ մտածել քննադատորեն: Հետազոտության ընթացքում դիտարկել եմ աշակերտների քննադատական մտածողության զարգացումը հարցերի միջոցով՝ հենվելով իրենց նախնական ճանաչողական գիտելիքների , դասից ստացած և ընկերներից լսած տեղեկությունների հիման վրա: Այս ծրագրի նպատակն է՝ կրթել և դաստիարակել արժանավոր քաղաքացիներ՝ այսինքն գործունյա,քննադատաբար մտածող անհատներ, որոնք ի զորու են լինելու ճիշտ կողմնորոշվել ժամանակակից կյանքի ամենաբարդ իրավիճակներում, ազատ ու անկաշկանդ հայտնել սեփական կարծիքները, ուշադիր ու հանդուրժող լինել այլոց կարծիքների հանդեպ և վստահաբար ստանձնել որոշումներ կայացնելու պատասխանատվությունը:Ցանկացած ուսուցիչ էլ կերազեր այսպիսի աշակերտ ունենալ:Իմ սիրտը ամեն անգամ ցավում էր, երբ մտնում էի 9-րդ դասարան: 9- րդ դասարանում նկատեցի օրեցօր հասունացող մի մեծ խնդիր . դա անտարբերությունն էր դասի, դասապրոցեսի,գրքի, սովորելու հանդեպ :9_րդ դասարանի աշակերտները բացարձակ տանը գիրք չէին բացում: **Իմ առջև խնդիր դրեցի** ակտիվացնել նրանց հետաքրքրությունը, նոր շունչ մտցնել ուսումնական գործընթացում: Ակտիվ քննարկումների արդյունքում աշակերտների մոտ ձևավորել նոր աշխարհայացք, մոտեցում, ուրոնողական աշխատանք:Նրանց դարձնել հետազոտող, փնտրող և լուծումներ առաջադրող, որով ուսուցման սուբյեկտ-օբյեկտ մոդելը վերափոխել սուբյեկտ-սուբյեկտ մոդելի: Դասարանում գլխավոր դերակատարը դարձնել աշակերտին/ աշակերտակենտրոն ուսուցում/ :**Իմ նպատակն էր** աշակերտներին պասիվ վերարտադրողի դերից քննադատական մտածողության միջոցով փոխարինել ակտիվ մասնակցի դերով՝ ստեղծելով նպաստավոր պայմաններ՝ ազատ, անկաշկանդ արտահայտելու: Հետազոտության արդյուքնները ցույց տվեցին, որ առաջին դասաժամում աշակերտները այնքան էլ ակտիվ չէին մասնակցում, ակտիվության մակարդակը ավելի ցածր էր, իսկ երկրորդ դասաժամին նորովի անցած նյութի տարբեր փուլերում ցուցաբերեցին մեծ ակտիվություն սովորել սովորելու ձգտումն էլ ավելի մեծացավ:

Գրական ակնարկ

Տարբեր հեղինակներ առաջ են քաշում քննադատական մտածողության տարբեր սահմանումներ: Ռոբերտ Յանգը (Robert Young) նշում է, որ քննադատական մտածողությունը ենթադրում է իմացական հմտությունների (cognitive skills) և ռազմավարությունների կիրառում, որը կմեծացնի ցանկալի արդյունքին հասնելու հավանականությունը: Ըստ նրա քննադատական մտածողությունը նպատակասլաց, պատճառաբանված, նպատակի իրագործմանն ուղղված մտածողություն է: Յանգը նաև

նշում է, որ խնդրիների լուծման, հիմնավորված ենթադրությունների կառուցման, հավանականությունների հաշվարկման և որոշումների կայացման հիմքում պետք է ընկած լինի քննադատական մտածողությունը (Young, 1980): Ըստ նրա, այդպիսի մտածողություն ունեցող անհատները վերոնշյալ հմտություններն օգտագործում են գիտակցաբար, այսինք նախապես գնահատում են այն արդյունքի ազդեցությունը, որը ձեռք կբերվի մտածելու գործընթացի ավարտին: ՔՄՁԿԳՄ ծրագիրը համագործակցային է: Այն տարբեր վայրերից ու մշակույթներից ներգրավված մարդկանց հավաքական իմաստությամբ կուտակված հսկայական իմացական և փորձառական ներդրման արդյունք է, ինչը կոչված է նպաստելու ծրագրային նպատակների լավագույնս իրականացմանը: Գաղափարների ոչ մի առանձին համալիր կամ մարդկանց ոչ մի առանձին խումբ չի կարող որոշել՝ ինչն է լավ կոնկրետ տվյալ պարագայում: Սակայն համախմբված գործելու դեպքում մենք ի զորու ենք առաջ ընթանալ դեպի լուծումներ և իրապես բարելավել աշակերտների ուսումնառությունը՝ նրանց հաղորդելով դրա համար անհրաժեշտ կենսունակ հմտություններ: Հասարակական կյանքի տեղաշարժերի արդի ժամանակաշրջանում դպրոցը նույնպես որոշակի փոփոխությունների է ենթարկվում: Աշակերտը գիտելիքներ մտապահողից ու վերարտադրողից, այսինքն՝ ուսուցման օբյեկտից, վերաճում է ուսուցման գործընթացի գործուն մասնակցի՝ ուսուցման սուբյեկտի, ինքնուրույն որոշումներ կայացնողի, իսկ դա էլ կյանքի հրամայական պահանջն է: Կյանքի կողմից թելադրվող բավականին բարդ նպատակների իրականացմանն են ուղղված ժամանակակից տեսական և գործնական մանկավարժության որոնումները, որոնք ամբողջական փաթեթով ընդունված է անվանել նորարարական մանկավարժություն: Նորարարական մանկավարժության նպատակների իրականացման ուղղությամբ կատարվում են որոշակի քայլեր, արդյունքում ձևավորվում են նորանոր տեխնոլոգիաներ: Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների օգտագործումը պա հանջներ է ներկայացնում ուսուցչին: Նա պետք է դառնա ոչ թե ուսումնական գործընթացի թելադրողը, այլ լինի ուղղորդողի, օգնականի, խթանողի, մասնակցի դերում և հնարավորություն ընձեռի աշակերտներին՝ խորհելու և անկաշկանդ ինքնարտահայտվելու: Ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ աշակերտները ոչ թե մեխանիկորեն պետք է մտապահեն պատրաստի՝ մատուցված գիտելիքները, այլ եռանդուն կերպով մասնակցեն գիտելիքների ձեռք բերման գործընթացին, կատարեն համապատասխան եզրահանգումներ, դառնան հայտնագործողներ, նորը ստեղծողներ: Այդ դեպքում ոչ միայն լուծվում են կրթական առավել բարդ խնդիրներ, այլև ուսման գործընթացը դառնում է բովանդակալից, հետաքրքիր, ըմբռնելի ու առավել արդյունավետ: Դպրոց մուտք գործող նորարարական մանկավարժական տեխնոլոգիաների թվին է պատկանում քննադատական մտածողության զարգացման տեսությունը: «Քննադատական մտածողություն» եզրույթն առաջին հայացքից բացասական երանգ է պարունակում, քանզի այն զուգորդվում է «քննադատել» բառին: Սակայն այս բառը ներառում է «քննել» և «դատել» բառ-հասկացու թյունները: Այսինքն, իմաստն է՝ որևէ հարց քննել, զննել տարբեր տեսանկյուն ներից, ապա դատել և եզրահանգում կատարել: Քննադատական մտածողությունն այսօր չունի մեկ միասնական սահմանում: Տարբեր հեղինակների կողմից տարբեր սահմանումներ ու բացատրություններ են տրվում: Սակայն բոլորի կողմից ընդունված է քննադատական մտածողությունը մտավոր բարդ գործընթաց , որն սկսվում է տեղեկատվությամբ և ավարտվում որոշումների կայացմամբ: Այսօր ձևավորվել է քննադատական մտածողության խթանման մեթոդների մի ստվար քանակություն, որը բնավ չի սպառել իր բոլոր հնարավորությունները և գտնվում է զարգացման փուլում: Կարևորն այն է, որ այս մեթոդները նպաստում են աշակերտների ճանաչողական կարողությունների, ինքնուրույնության, ստեղծագործական ներուժի բացահայտմանն ու զարգացմանը: Քննադատական մտածողության խթանման բազմաթիվ մեթոդներից յուրաքանչյուրի արդյունավետ կիրառումը դասարանում ենթադրում է փոխադարձ վստահության մթնոլորտի առկայություն: Յուրաքանչյուր երեխա պետք է լինի ազատ ու անկաշկանդ, կարողանա մտածել, ներկայացնել իր տեսակետը, մտքեր փոխանակել ու լսել դիմացինին, հաղորդակցվել և յուրաքանչյուր դասին ունենալ իր թեկուզ փոքրիկ ներդրումը: Քննադատական մտածողության մեթոդների կիրառմամբ ընթացող դասերի ժամանակ աշակերտներն ընդգրկվում են դասապրոցեսի մեջ՝ մինչև նոր նյութի հաղորդումը (խթանում), նյութի մատուցման ընթացքում (իմաստի ընկալում) և նյութը յուրացնելուց հետո (կշռադատում): Այս համակարգը հայտնի է որպես_ԽԻԿ /հապավումով/ համակարգ, որը նման է ավանդական դասի կառուցվածքին՝ նախապատրաստական փուլ (խթանում), նոր դասի հաղորդում (իմաստի ընկալում) և ամփոփման փուլ (կշռադատում): Քննադատական մտածողության տեխնոլոգիայի կիրառումը նպաստում է ոչ միայն ուսման արդյունավետության բարձրացմանը, այլև յուրացվող գիտելիքները դարձնում է

կիրառելի, օժանդակում ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերելու կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը, խթանում սովորողների ստեղծագործական մտածողությունը:

Ի՞նչ է քննադատական մտածողությունը

Քննադատական մտածողության մասին շատ է գրվել: Քննադատաբար մտածողների համար ինֆորմացիայի հիմնական ընկալումը ավելի շուտ ուսումնական գործընթացի սկիզբն է, քան վերջնակետը: Քննադատաբար մտածելը ենթադրում է ընկալել գաղափարները և ապա սկսել խորհել դրանց նշանակության մասին, դիտել դրանք մի փոքր թերահավատությամբ՝հավասարակշռելու համար դրանք դիտարկելով հակադիր տեսանկյուններից, հիմնավորումները ամրապնդելու համար կառուցել դրույթների համակարգ և այդ կառույցների վրա հենվելով՝գալ որոշակի դիրքորոշման: Քննադատական մտածողությունն իրենից ներկայացնում է հասկացությունները և ինֆորմացիան վերամիմաստավորելու և ձևափոխելու բարդ գործընթաց, որը կատարվում է գաղափարներն ու միջոցները՝ ստեղծագործարար համադրելու միջոցով: Դա ակտիվ ու ինտերակտիվ ճանաչողական գործընթաց է, որ սկիզբ է առնում միանգամից մի քանի մակարդակներում: Քննադատական մտածողությունն ավելի հաճախ ունենում է որոշակի նպատակաուղղվածություն, սակայն երբեմն այն կարող է լինել պարզապես ստեղծագործական գործընթաց՝ առանց սույն նպատակների: Ռոբերտ Էննիսը, ով հանդիսանում է քննադատական մտածողության առաջատար մասնագետներից մեկը, քննադատական մտածողությունը սահմանում է, որպես «ողջամիտ և ռեֆլեկտիվ մտածողություն, որը միտված է որոշելու ինչին հավատալ կամ ինչ անել» (Ennis, 1989): Մեկ այլ աշխատության մեջ Էննիսը նշում է, որ քննադատաբար մտածելու նպատակն է գտնել ճշմարտությունը, կամ ճշմարտությանը ամենամոտ գտնվող պատասխանը (Ennis, 2008): Սակայն սա ամենևին չի նշանակում, որ խնդրի շուրջ քննադատաբար մտածելու արդյունքում կբացահայտվի ճշմարտությունը: Հետևաբար, ընկալումը, թե որն է ճշմարտություն, մեծապես կախված է մտածողի նախապաշարմունքից և հմտություններից: Էննիսը սահմանել է, որ քննադատական մտածողությունը՝ տարբեր պնդումների ճիշտ 10 գնահատումն է (Ennis, 1962): Սակայն ինչպես տեսնում ենք, այս սահմանումը շատ լայն է պրակտիկ կիրառման համար: Առավել ընդգրկուն և մանրամասն սահմանում են ներկայացրել Միքայել Սկրիվենը և Ռիչարդ Փոլը: Նրանք նշում են, որ քննադատական մտածողությունը դա դիտարկման, փորձի, դատողության, պատճառաբանության և/կամ հաղորդակցության միջոցով հավաքած ինֆորմացիան ակտիվորեն և հմտորեն համակարգելու, կիրառելու, վերլուծելու, գնահատել ու և ստեղծագործելու մտավոր գործընթաց է, որը ծառայում է որպես ուղեցույց անհատի համոզմունքների ձևավորման և գործողությունների համար (Scriven & Paul, 1987): Կարելի է ասել, որ քննադատական մտածողությունն ունի երկու բաղկացուցիչ մաս. բաղկացուցիչներից մեկը ենթադրում է ինֆորմացիան և համոզմունքները գեներացնելու և վերամշակելու հմտությունների ամբողջություն, իսկ երկրորդը՝ այդ հմտություններն օգտագործելու սովորույթն է, որի արդյունքում ձևավորվում է սեփական վարքագիծն ուղղորդելու հիմքը: Քննադատական մտածողության մեկ այլ ականավոր մասնագետ Էդուարդ Գլասերը հակիրճ սահմանել է, թե որն է քննադատաբար մտածելու կարողությունը: Ըստ նրա, այն ունի երեք բաղկացուցիչ մաս. Առաջինը դա անհատի կյանքի և գործունեության ընթացքում հանդիպած խնդիրները մտածված ձևով քննարկելու վարքագիծն է; Երկրորդը՝ տրամաբանական հետաքննության (logical inquiry) և հիմնավորման/ պատճառաբանման (reasoning) մեթոդների իմացությունն է: Երրորդը՝ վերոնշյալ մեթոդները կիրառելու հմտությունն է: Երբ ուսումնասիրում ենք քննադատական մտածողության ձևավորման և զարգացման համար գրականությոնուում գոյություն ունեցող մոդելները, ակնհայտ է դառնում, որ բոլոր այդ մոդելները շատ կամ քիչ չափով հիմնվում են դեռևս 1956թ. ականավոր գիտնական Բենջամին Բլումի կողմից մշակված տաքսոնոմիայի վրա: Բլումի 11 տաքսոնոմիայի ճանաչողական կամ, այսպես կոչված, իմացական խումբը բաղկացած է վեց մակարդակներից – գիտելիք, ընկալում, կիրառում, վերլուծություն, գնահատում և ստեղծագործում: Գիտելիքի ձեռքբերման մակարդակում սովորողը կարող է հիշել, տարբերակել, մտաբերել կամ գտնել ուսուցման ընթացքում ներկայացված յուրահատուկ տեղեկատվություն: Սովորողը կարող է ցույց տալ, որ հասկացել է տեղեկությունը՝ վերափոխելով այն տարբեր ձևերի կամ ճանաչել դրա վերափոխված տարբերակը: Ընկալման մակարդակում կարող է իրականացվել սովորողի կողմից բառերով բացատրության, ամփոփման, օրինակ բերելու և այլ ձևերով: ը: Այն կարող է դրսևորվել փաստերի, կանոնների, դիագրամաների, ձայնի և այլնի միջոցով: Կրրառման մակարդակում սովորողը կարող է տեղեկատվությունը կիրառել՝ այն օգտագործելով կոնկրետ գործողության մեջ: Այդ գործողությունները

կարող են լինել հաշվելը, գրելը, կարդալը, սարքավորումներ օգտագործելը և այլն: Չորրորդ մակարդակում, որը ենթադրում է վերլուծություն, սովորողը կարող է ճանաչել տեղեկատվության հիմնական կազմվածքն ու կառուցվածքը, տրոհել բաղկացուցիչ մասերի և որոշել դրանց միջև առկա կապերը: Սովորողը կարող է տարբերել փաստերը ենթադրություններից Բլումի տաքսոնոմիայի հինգերորդ մակարդակը դա գնահատումն է,որտեղ սովորողը կարող է տեղեկատվություն ստանալ տարբեր աղբյուրներից՝ իր անհատական նյութը, տեսակետը, դիրքորոշքումը ձևավորելու նպատակով: ԵՎ վերջապես վերջին՝ գնահատման մակարդակում սովորողը կարող է որոշակի չափորոշիչներ կիրառել՝ օբյեկտի վերաբերյալ եզրահանգումներ անել և տրված պայմաններում նպատակահարմար լուծումներ գտնել: Վեցերորդ մակարդակում սովորողը պետք է ունակ է կարողանա ցուցաբերել ամբողջական գիտելիք կիրառելով անցածը, վերադասավորել, ստեղծել նորը 12 Վերոնշյալ բոլոր վեց մակարդակներում էլ տարրական դպրոցի աշակերտներին անհրաժեշտ են համապատասխան հմտություններ, սակայն քննադատական մտածողության ձևավորման և զարգացման տեսանկյունից պետք է առավելապես շեշտել վերլուծության, գնահատման աստեղծելու մակարդակները: Բլումի տասքոնոմիայի մակարդակները դասավորված են աճման կարգով, այսինքն նախորդ մակարդակը հաջորդի հիմքն է, սակայն քննադատական մտածողության համար անհրաժեշտ են այն հմտությունները, որոնք ձևավորվում են վերջին երեք մակարդակներում:

Քննադատական մտածողության նպատակներն ու խնդիրները

Չնայած այն համընդհանուր համաձայնությանը, թե որքան կարևոր է քննադատական մտածողությունը, վերջինիս միասնական սահմանում թերևս չկա:Հայերենում խնդիրն առավել բարդ է,քանի որ տերմինը հայերեն է թարգմանվում անգլերենից և գոյություն ունեցող թարգմանությունը հաճախ չի արտացոլում այն ընդգրկուն հասկացությունը, որը ներդրված է անգլերեն տերմինի մեջ:Այսպես հայերենում ,,Քննադատական մտածողությունը,, ենթադրում է պարտադիր քննադատություն խնդրո առարկայի շուրջ,մինչդեռ ,critical thinking, արտահայտությունն առավել ընդգրկուն է և ենթադրում է քննողական մոտեցում,այսինքն, խնդրո առարկայի բազմակողմանի քննարկում:Հետևաբար առավել նպատակահարմար կլինի, եթե ,criticalthinking,-ը թարգմանվեր ,,քննողական մտածողություն,,: Քննադատական մտածողությունը մի գործընթաց է, որի հիմքը դրվում է դպրոցում աստիճանաբար,ուսումնառության յուրաքանչյուր փուլում: Դրա հիմնական նպատակն է ակտիվացնել ուսումնական գործընթացը: Ակտիվ քննարկումների արդյունքում աշակերտների մոտ ձևավորվում է աշխարհայացք, որը դուրս է նախապա–շարմունքներից, , ինքնուրույն վերաբերմունք այս կամ այն երևույթների հանդեպ: Քննադատական մտածողությունը մտավոր բարդ գործընթաց է, որն սկսվում է տեղեկատվությամբ և ավարտվում որոշման կայացմամբ: Քննադատական մտածողության համակարգը նպաստում է ոչ միայն ուսման արդյունավետության բարձրացմանը, այլև գիտելիքները դարձնում է կիրառելի և նպաստում ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերելու կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը: Ակտիվ ուսումնառության շնորհիվ հնարավոր է դառնում ուսման համար նպաստավոր պայմաններ ստեղծել դասարանում:Դրա համար անհրաժեշտ է. Ձևավորել ,գտնել իրենց ստացած գիտելիքների և անձնական կենսափորձի միջև եղած կապը: Զարգացնել ուսումնական որոնողական աշխատանքներ կատարելու գործընթացը:

Զարգացնել ցանկացած նոր տեղեկություն քննադատաբար և ստեցծագործաբար , արդյունավետ իմաստավորել: Սրա շնորհիվ աշակերտները կկարողանան կատարել ուսումնական որոնողական աշխատանք: Կկարողանան գտնել իրենց ստացած գիտելիքների և իրենց անձնական կենսափորձի միջև եղած փոխադարձ կապը, որպեսզի գիտելիքը գործնական կիրառություն գտնի: Կդառնան հետազոտող, փնտրող և լուծումներ առաջադրող, որով ուսուցման սուբյեկտ-օբյեկտ մոդելը վերափոխվում է սուբյեկտ-սուբյեկտ մոդելի: Դասարանում գլխավոր դերակատարը կդառնա աշակերտը/ աշակերտակենտրոն ուսուցում/ : Աշակերտները

կկարողանան որոշել, թե զանազան տեղեկություններն ինչպես են առնչվում միմյանց հետ: Կկարողանան նոր տվյալները, նոր գաղափարները տեղադրել իրենց ունեցած գիտելիքների համակարգում: Կկարողանան քննադատաբար, ստեղծագործաբար և արդյունավետ կերպով իմաստավորել ցանկացած տեղեկություն: Քննադատական մտածողության անհրաժեշտությունը դպրոցում այսօր Հայաստանի կրթական բարեփոխումներով շահագրգիռ մանկավարժները լուրջ որոնումների մեջ են: Դրանք հիմնականում նպատակաուղղված են դասավանդման արդյունավետությունը բարձրացնող նոր մեթոդների, հնարների, եղանակների հայտնագործմանը և գործնականում կիրառելու խնդիրներին: Համաշխարհային մանկավարժության մեջ արդեն կան որոշակի նվաճումներ, որոնք հասանելի են նաև հայ ուսուցչին և հաջողությամբ կարող են գործադրվել մեզանում: Այս ծրագրի նպատակն է՝ կրթել և դաստիարակել արժանավոր քաղաքացիներ՝ այսինքն՝ գործունյա,քննադատաբար մտածող անհատներ, որոնք ի զորու են լինելու ճիշտ կողմնորոշվել ժամանակակից կյանքի ամենաբարդ իրավիճակներում, ազատ ու անկաշկանդ հայտնել սեփական կարծիքները, ուշադիր ու հանդուրժող լինել այլոց կարծիքների հանդեպ և վստահաբար ստանձնել որոշումներ կայացնելու պատասխանատվությունը:

Քննադատական մտածողության զարգացումը գրականության ուսուցման գործընթացում

Դասավանդման ընթացքում կիրառելով քննադատական մտածողության զարգացմանը նպաստող մեթոդներ ու հնարներ՝ համոզվել եմ, որ աշակերտները դառնում են ակտիվ սովորող, մտածող և ստեղծագործող անհատներ: Արդյունավետ քննադատական մտածողություն դրսևորելու համար նրանք պետք է զարգացնեն իրենց ինքնավստահությունը և հասկանան, որ իրենց կարծիքներն ու մտքերն արժեքավոր են: Ակտիվորեն մասնակցեն ուսումնական գործընթացին: Հարգանքով լսեն բազմազան կարծիքներ: Գրեթե բոլոր ականավոր հեղինակները համակարծիք են, որ քննադատական մտածողության ձևավորմանը միանշանակ նպաստում է դասավանդման ինտերակտիվ մեթոդների կիրառումը: Երբ աշակերտն ակտիվորեն մասնակցում է ուսումնառության գործընթացին, նա ակամա սկսում է մտածել խնդրի շուրջ, ուսուցչից բացի լսում է իր համադասարանցիների կարծիքը և տալիս է իր պատճառաբանված համաձայնությունը կամ անհամաձայնությունը բարձրաձայնված կարծիքների վերաբերյալ: Ինչպես նաև կարող է ներկայացնել ամբողջովին տարբերվող տեսակետ, որը նույպես պետք է պատճառաբանված լինի, քանզի դասարանն ընդհանրապես ճնշում է գործադրում անհիմն կարծիքների վրա : Յուրաքանչյուր առարկայի ծրագրով նախատեսված գիտելիքների ուսուցումը չի կարող երբեք իր մեջ ընդգրկել այն բոլոր գիտելիքներն ու հասկացությունները, որոնք երեխան պետք է ստանա այդ ուսումնական առարկայից: Ծրագրում տրվածը միայն այն հիմնականն է, որ անհրաժեշտ է տվյալ առարկայից ընդհանուր գաղափար տալու համար, իսկ մնացածը երեխաներն իրենք պետք է ինքնուրույն կերպով ստանան շրջապատից ու գրքերից**:** Այսինքն, յուրաքանչյուր ուսուցչի գերխնդիրն է սովորել սովորեցնելը: Սեփական դասապրոցեսում օգտագործում եմ հետևյալ վարկածը, որպեսզի կարողանամ վեր հանել քննադատական մտածողության վերաբերող ցանկացած խնդիր և տալ համապատասխան լուծում, որպեսզի աշակերտը կարողանա հեշտությամբ մտածել քննադատորեն:

Գործնական համատեքստ

/հետազոտության ընթացքը /

Այս հետազոտությունը կատարվել է Արմավիրի մարզի Եղեգնուտ գյուղի իններորդ դասարանում:Դասարանը բաղկացած է քսանյոթ աշակերտից**,** որից չորսը արցախցիներ են: Դասրանը պասիվ, անհամերաշխ, անհանդուրժող դասարան է:Արցախցիներին սիրալիր և

հյուրընկալ մթնոլորտը ջերմացնելու համար 10 րոպեանեց հայրենասիրական դասախոսություն կարդացի, որից հերո անցանք դասին:Դասաի թեման էր՝<<Մեսրոպ Մաշտոցի կյանքը և գրերի գյուտը>> :Դասի ընթացքում աշակերտներից մեկը հարցրեց, թե արդյոք հայերը Մեսրոպ Մաշտոցից առաջ գրեր ունեցել են, և եթե ունեցել են, ապա ինչ է պատահել այդ տառերի հետ: Ես իմ առջև դասին վերաբերվող ևս մի խնդիր դրեցի՝ ծրագրի մեջ չմտնող այս հարցին տալ գիտական, համոզիչ պատասխան:Քանի որ 9-րդ դասարան ի աշակերտները պասիվ, թույլ երեխաներ են, ես նախընտրեցի քննդատական մտածողության մեթոդի միջոցով և աշակերտներին ակտիվացնել, և ուսման արդյունավետության որակը բարձրացնել:Աշակերտներին հանձնարարեցի հաջորդ ժամին սովորել <<Նախամաշտոցյան գրերը>> թեման:Որպես գործիք՝ օգտագործեցի քննադատական մտածողություն մեթոդը: Փնտրել, գտնել,սովորել, կարծիք հայտնել,հետազոտել, ապացուցել, փաստարկներ բերել,տալ իր պատճառաբանված համաձայնությունը կամ անհամաձայնությունը բարձրաձայնված կարծիքների վերաբերյալ, ներկայացնել ամբողջովին տարբերվող տեսակետ, որը նույպես պետք է պատճառաբանված լինի և այլն:

Դասի թեման՝ <<Նախամաշտոցյան գրերը>>

նպատակը՝

1.Իմանալ հայ ժողովրդի հեթանոսական շրջանի դպրության մասին:

2.Իմանալ նախամաշտոցյան գրի մասին:

3.Տարբեր աղբյուրներից վկայություններ բերել նախամաշտոցյան գրերի մասին:

Վերջնարդյունք՝

1. Ներկայացնել հայ ժողովրդի հեթանոսական շրջանի դպրության մասին տեղեկությունները;
2. Ներկայացնել նախամաշտոցյան գրի մասին դուրս բերված փաստերն ու վկայությունները տարբեր աղբյուրներից:
3. Ներկայացնել նախամաշտոցյան Հայաստանի գրավոր մշակույթի մասին:
4. Ձևավորել հայրենասիրական զգացումը , արժևորել գիր ու գրակա-նության ուժը հայ ժողովրդի կյանքում
5. Կարևորել հայոց այբուբենի դերն ու նշանակությունը;

Նախապես դասարանը բաժանեցի 4 խմբի, տվեցի հանձնարարություններ:Առաջին ժամին աշակերտները մասամբ էին պատրաստ, չէին հասկացել իրենց անելիքը, խմբերի մեջ անհամաձայնություն և անհամերաշխություն կար: Երկրորդ ժամին պատրաստ էին: Դասի ընթացքում որպես նախապատրաստական աշխատանք կիրառեցի քննադատական մտածողության տեխնոլոգիայով առաջարկվող մեթոդներից մի քանիսը:

Ինտերակտիվ (փոխներգործուն) մեթոդ

Սխեմա 3, Ինտերակտիվ մեթոդ

Մեթոդները գործիքներ են, որոնց օգնությամբ տեսությունն իրականացնում է իր իմացական կամ գործնական նպատակները: Այլ խոսքով, մեթոդը տեսության գործունակության, նրա ակտիվության, դրսևորման միջոց է,որոնց օգնությամբ տեսությունն իրականացնում է իր իմացական կամ գործնական նպատակները: Այլ խոսքով, մեթոդը տեսության գործունակության, նրա ակտիվության դրսևորման միջոց է: Խթանման փուլում կիրառեցի Պրիզմա մեթոդը,որից պարզ դարձավ, որ նախամաշտոցյան գրերը փաստացի եղել են իրական:



Նախամաշտոցյան գրերը իրական փաստեր են:

1-ին խումբը ներկայացրեց նախամաշտոցյան Հայաստանի հարուստ դպրության մասին, ընթերցեցին իրենց փնտրած և գտած նյութերը: Հայոց դիցարանի մասին,Տիր աստծու մասին,

նրան նվիրված մեհենական ծիսակատարությունների մասին : Պատկերի և տեքստի համադրում հնարի միջոցով ցուցադեցին նաև համահունչ նկարներ:

2-րդ խումբը ներկայացրեց իր հանձնարարությունը նախամաշտոցյան գրերի մասին, թե քանի՞ տեսակ են եղել, Ինչպե՞ս են կոչվել:Համակարգչով ցուցադրեցին <<Նախամաշտոցյան Հայաստանի գրավեր մշակույթը>> ԵՊՀ Հայագիտության հետազոտությունների ինստիսուտի պաշտոնական ալիք youtobe – յան ալիքով / httpWWW.armia.am/;

3-րդ խումբը ներկայացրեց պատմիչների վկայությունները :Կորյունը, Խորենացին և ուրիշներ հաստատում են, որ հայոց այբուբենը մինչև Մաշտոցը գոյություն է ունեցել նույնիսկ Սիրիայում եպիսկոպոս Դանիելի մոտ/«Դանիելյան» այբուբեն,որը ոչնչացումից փրկելու համար Դանիել եպիսկոպեսը թաղել է հողի տակ:Մեհենական կամ քրմական գրերը դիտարկվում էին որպես քրիստոնեության տարածման խոչընդոտ: Ինչպես ամրագրում են հայո ց պատմիչները՝ Բուզանդը, Փարպեցին և Ագաթանգեղոսը, քրիստոնեությունը տարածվեց հրով և սրով, հեթանոսական տաճարներն ավերվեցին և դրանց վրա կառուցվեցին քրիստոնեական տաճարներ: Քրմերին կա՛մ ստիպում էին քրիստոնեություն ընդունել, կա՛մ ոչնչացնում էին: Իսկ քրմական դասը գիտելիքի միակ կրողն էր քրիստոնեական Հայաստանում: Գրիգոր Լուսավորչի՝ քրիստոնեական Հայաստանի կարևորագույն հիմքերից մեկը, ըստ էության, եղել է նաև գրերի ստեղծողը: Կան նաև վկայություններ, որ Լուսավորիչը անձամբ արամեերենից թարգմանել է Աստվածաշունչը և տարածել այն, բայց հիմնականում բանավոր տարբերակով:

4-րդ խումբը ցուցադրեց և մեկնաբանեց նախամաշտոցյան գրերի մասին փաստող հնագիտական իրերի նկարներ: 4 –րդ խումբը օգտվելով հանացանցից՝ ցուցադրեցին <<Նախամաշտոցյան Հայաստանի գրավոր մշակույթը>> հաղորդումը ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի պաշտոնական youtobe-յան ալիքով :

Կշռադատման փուլում Տ-աձև աղյուսակի միջոցով գրատախտակին գրեցին նախամաշտոցյան գրերի մասին փաստերն ու վկայությունները:

Ամփոփման ժամանակ գրատախտակին գրում եմ հետևյալ վիճահարույց հարցերը՝ստուգելու համար աշակերի հայրենասիրության զգացողության ընկալումը:

1.Մաշտոցից առաջ եղե՞լ են հայերեն նշանագրեր: Արդյո՞ք Մաշտոցը այդ նշանագրերը չի կատարելագործել, թե՞ բոլորովին նորն է ստեղծել:

2.Արդյոք՞ Մաշտոցը չի օգտվել մեհենական համակարգից:

3.Մաշտոցը 3 տարի ճգնել է Սյունյաց քարանձավներում:Սյունիքը հայտնի է շատ սեպագրերով: Ճի՞շտ է ,որ Մաշտոցը տեսիլքի ժամանակ սեպագրերն է տեսել և մշակել:

Այնուհետև դատողություններ արեցին, կարծիք հայտնեցին,որ հնարավոր չէ հայերը Մաշտոցից առաջ գիր չունենային ,այլապես չէին կարող այդքան արագ ու ճոխ գրաբարով թարգմանել Աստվածաշունչը:2-րդ՝ հնարավոր չէ հայերը Մաշտոցից առաջ գիր չունենային ,այլապես չէին ունենա Տիր աստծուն նվիրված դպրության:Աշակերտները բերեցին համոզիչ փաստեր,որ Մաշտոցը 40 օրյա աղոթքից և ծոմապահությունից հետո տեսիլքի մեջ տեսնում է հայոց գրերը:Համեմատեցին այբուբենը Աստվածաշնչի հետ:Եկան այն համոզման, որ հայոց գրերը ոչ միայի քրիստոնեության տարածման համար են ծառայել, այլ նաև եղել են պետականության գաղափարական հիմք, ազգային ինքնության պահապան , անկախության

ապահովում: Մենք պարտական ենք Սուրբ Մաշտոցին:Հայոց այբուբենը մեր ինքնությունն է, մեր հոգեկերտվածքը, մեր անկախությունը,մեր զենքը, որը այսօր կորցնելու իրավունք չունենք:

«Մտքով՝ ստեղծող, խոսքով՝ պայծառ, գործով՝ համբերող, սիրով՝ անկեղծ, սովորեցնելու մեջ՝ չձանձրացող, և որ նրա (Մեսրոպ Մաշտոցի) վարքի մեջ ամբարտավանությունը և մարդահաճությունը երբեք չկարողացան տեղ գտնել»:**Մովսես Խորենացի (պատմահայր)**

«Լեզուն փոխարինել է և պետություն, և բանակ, և բերդ; ժողովուրդների պատմական փորձը ապացուցեց, որ երբ մի ոտնահարված, ստրկացած ժողովուրդ պահում է իր լեզուն, նա ունի իր ազատության բանալին իր ձեռքում»:**Ավետիք Իսահակյան**

«Մաշտոցի հրաշալի ստեղծագործության՝ հայկական այբուբենի կատարելությունը աշխարհի մեծագույն լեզվաբանների զարմանքն է առաջացրել… » :**Էդմոնդ Շուց** (հունգարացի բանասեր, դոկտոր

Ջորջ Բայրոն. «Աստծո հետ խոսելու միակ լեզուն հայերենն է»:

Եվ վերջում գնահատեցի և խմբերին, և աշակերտներին պատճառաբանված:

Ամփոփում

Հետազոտական աշխատանքի արդյունքում եկա այն եզրակացության, որ եթե ավանդական դասի արդյունքում լուծվում են մի շարք ուսումնական խնդիրներ՝ գիտելիքների ձեռքբերում, ապա քննադատական մտածողության զարգացման մեթոդների կիրառմամբ լուծվում են նաև այլ ուսումնադաստիարակչական խնդիրներ. իրականացվում են լուրջ ճանաչողական, մտավոր աշխատանք, երեխաները ձեռք են բերում ստեղծագործելու,հաղորդակցվելու, արտահայտվելու, իրար լսելու կարողություն: Ձևավորվում է վստահություն՝ սեփական ուժերի նկատմամբ, ինքնագնահատման, մյուսներին գնահատելու և մի շարք այլ կարևոր կարողություններ: Տեսական և փորձարարական աշխատանքների արդյունքում պարզ դարձավ, որ քննադատական մտածողության տեխնոլոգիան կարող է արդյունավետ կերպով կիրառվել պասիվ դասարաններում , ինչպես 9-րդ դասարանն է՝ուսուցման գործընթացում՝ որպես ակտիվ և ադապտիվ մանկավարժական տեխնոլոգիա, հատկապես արցախցի ների համար, որը նպաստում է սովորողների ակտիվությանը, ճանաչողական կարողությունների արդյունավետ զարգացմանը:Փորձարարական հետազոտության արդյունքները վկայում են, որ քննադատական մտածողության տեխնոլոգիան կարող է արդյունավետ կիրառվել՝ ավագ և միջին դպրոցում և նպաստել կրտսեր դպրոցականների ճանաչողական կարողությունների ձևավորմանն մանկավարժական հետևյալ պայմանների դեպքում, զարգացմանը բարենպաստ և զարգացնող կրթական միջավայրի ապահովում, սովորողների տարիքային և անհատական առանձնահատկությունների հաշվառում, ուսուցման գործընթացի միջոցների, մեթոդների, ընթացակարգի ճիշտ ընտրություն, ուսումնական գործունեության բազմազան տեսակների կիրառում, ուսման դրական ու ներքին դրդապատճառների ձևավորում, դասարանում դրական հոգեբանական մթնոլորտի ապահովում, ուսուցչի մասնագիտական պատրաստվածության առկայություն:: Այս տեխնոլոգիայի շատ մեթոդներ ճկուն են և հեշտությամբ հարմարեցվում, համապատասխանեցվում են պասիվ և անտարբեր դասարանների հոգեբանամանկավարժական առանձնահատկություններին: Փորձարարական աշխատանքների արդյունքները փաստում են, որ քննադատական մտածողության տեխնոլոգիան նպաստում է ոչ միայն սովորողների ճանաչողական կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը, այլ նաև ՀՀ Հանրակրթության պետական չափորոշչի մյուս բաղադրիչների՝ գիտելիքների համակարգի, հաղորդակցական, համագործակցային, ստեղծագործական, ինքնուրույն գործունեության կարողությունների ու համակարգի ձևավորմանը, հմտությունների և սովորողների արժեքային համակարգի ձևավորմանը;

.

Գրականության ցանկ

ՀՀ ԿԳ նախարարություն, կրթական ծրագրերի կենտրոն: Կրթության ազգային

ինստիտուտ:Ուսուցիչների հինգօրյա վերապատրաստումների պլան և նյութեր, 2007:

Կորյուն <<Վարք Մաշտոցի>>/Մանուկ Աբեղյանի խմբագրությանբ/ Երևան, 1941

Աշոտ Գ. Աբրահամյան<<Նախամաշտոցյան հայ գիրը և գրչությունը>>

Արտակ Մովսիսյան <<Նախամաշտոցյան Հայաստանի գրային համակարգերը>>

Արտակ Մովսիսյան<<Հայկական մեհենական գրականություն>>

<<Նախամաշտոցյան Հայաստանի գրավեր մթակույթը>> ԵՊՀ Հայագիտության հետազոտությունների ինստիտուտի պաշտոնական ալիք youtobe httpWWW.armia.am

Հավելված

Նախամաշտոցյան դպրության մասին վկայություններ

1.Կան վկայություններ, որ Լուսավորիչը անձամբ արամերենիվ թարգմանել է Աստվածաշունչը :

2.Ագաթանգեղոսը պատմում է՝ որ Տրդատ Գ թագավորի ժամանակ գրչության արվեստը տարածված էր Հայաստանում:

.Արդ, հրաման է հասել ինձ՝ Ագաթանգեղոսիս... Տրդատ Մեծ արքայից գրի առնել ժամանակի դեպքերը, պատմելով...:

3.Կորյունը, Խորենացին և ուրիշներ հաստատում են, որ հայոց այբուբենը մինչև Մաշտոցը գոյություն է ունեցել նույնիսկ Սիրիայում եպիսկոպոս Դանիելի մոտ/«Դանիելյան» այբուբեն/:

4.Հայ պատմաբան Ինջիկյանը գրում է ,որ 1788 թվականին ինքը Ստամբուլում տեսել է Անգլիայի դեսպան Ինզըլի հավաքածուն, որը պարունակում էր Փեքր Ասիայում հավաքված հարյուր հազարավոր հին մետաղադրամներ և գտել դրանց մեջ հայոց արքա Պարթև Արշակունու (113-114 թթ.) հարյուրավոր մետաղադրամներ։ Դրամների մի երեսին պատկերված է կրակներով սեղան, մյուս կողմում՝ թագավորի դիմանկարը և դրամի արտաքին եզրին գրված են հայերեն բառեր «հ», «տ», «պ», «կ», «ճ» և այլ տառերով։

5..Հայ պատմաբան Ինջիկյանը գրում է, որ 1788 թվականին ինքը Ստամբուլում տեսել է Անգլիայի դեսպան Ինզըլի հավաքածուն, որը պարունակում էր ափառքր Ասիայում հավաքված հարյուր հազարավոր հին մետաղադրամներ և գտել դրանց մեջ հայոց արքա Պարթև Արշակունու (113-114 թթ.) հարյուրավոր մետաղադրամներ։ Դրամների մի երեսին պատկերված է կրակներով սեղան, մյուս կողմում՝ թագավորի դիմանկարը և դրամի արտաքին եզրին գրված են հայերեն բառեր «հ», «տ», «պ», «կ», «ճ» և այլ տառերով։

6. Նախաքրիստոնեական հայկական գրի մասին է վկայում նաև հայ լեզվաբան, պատմաբան և երաժշտագետ Մինաս Բժշկյանի 1777-1851 թթ.) կողմից Օդեսա քաղաքի հարավային մասում գտնվող հայկական եկեղեցիներից մեկում գտնված Ք.ա.7-րդ դարի մի հայատառ գիրք։

7. Փիլոստրատը (175-249 թթ.)՝ կայսր Կարակալայի պատմիչը, իր «Ապոլոնի Դիանան» գրքում պատմում է, որ Հայկական Տավրոսում մի մեծ հովազ են բռնել ոսկե օղակապը վզին, որի վրա հայերենով գրված է եղել. «հայոց արքա Արշակից Դիոնիս աստծուն

8.Ագաթանգեղոսը գրում է, որ ինքը սիրապետուն էր մի քանի լեզուների, այդ թվում և նախագրերի արվեստին:

9. Ագաթանգեղոսը գրում է,որ Տրդատրի քրմերը գրի առան և տեղեկացրին թա- գավորին:

10 Մ. Խորենացին գրում է.<<Արամ նահապետը գրավեց Կապադովկիան և ստիպեց տեղացիներին՝ սովորել հայենե լեզուն և խոսքը>>;

Նախամաշտոցյան դպրության մասին հնագիտական փաստեր

1.ժայռապատկերներ /նկար 1/

2.մեհենական սեպագիր արձանագրություններ /նկար 2/

3.հսկայանշաններ /նկար 3/

4.սահմանաքարեր/նկար 4/

5. մեհենագրեր/նկար 5/

6. դրամներ և այլն:/նկար 6/

Պատկերի և տեքստի համադրում :Մենք ապրում ենք մի ժամանակում, երբ պատկերներ ստեղծելու հնարավորությունները մեծացել են: Արդյունքում մարդիկ ավելի լավ են յուրացնում այն ամենը, ինչը ուղեկցվում է պատկերներով: Դրանք կարող են լինել նկարներ, լուսանկարներ, գծագրեր, գծապատկերներ, ինֆոգրաֆիկաներ

Ուսուցման մեթոդները հաճախ ընկալվում են որպես դեղատոմս:

Դասապլան

Ուսուցիչ՝ Նաիրա Գաբրիելյան

Առարկան- Գրականություն

Դասարան-9-րդ

Դասի թեման-Նախամաշտոցյան գրեր

Դասի տիպը-ԽԻԿ

Օգտագործվող նյութեր- դասագիրք, գրիչ, տետր, համակարգիչ ,հեռախես, Խորենացու <<Հայոց պատմություն >>,Ագաթանգեղոսի<<Պատմութ յուն>> գրքերը, Կորյունի<<Վարք Մաշտոցի>> մատյանը

Հիմնական հասկացություններ-հեթանոսություն, քրիստոնեություն, մշակույթ,գիր,

դպրություն, փաստեր, վկայություններ

Դասի նպատակ-1.Իմանալ հայ ժողովրդի հեթանոսական շրջանի դպրության մասին:

2.Իմանալ նախամաշտոցյան գրի մասին:

3.Տարբեր աղբյուրներից վկայություններ բերել նախամաշտոցյան գրերի

մասին:

Վերջնարդյունք-1. Ներկայացնել հայ ժողովրդի հեթանոսական շրջանի դպրության

մասին տեղեկությունները;

2. Ներկայացնել նախամաշտոցյան գրի մասին դուրս բերված

փաստերն ու վկայությունները տարբեր աղբյուրներից:

3.Ներկայացնել նախամաշտոցյան Հայաստանի գրավոր մշակույթի մասին:

4. Ձևավորել հայրենասիրական զգացումը , արժևորել գիր ու գրակա-

նության ուժը հայ ժողովրդի կյանքում:

Կապը ՀՊՉ-ի հետ- Հ9-40, Հ9-41,Հ8-7

Խաչվող հասկացություններ-մշակույթ, հնագիտություն, դպրություն,արձանագրություններ,

ժայռապատկերներ, սահմանաքարեր, գծագրեր, լեռնաշխարհ

Մեթոդներ –պրիզմա ,ինտերակտիվ (փոխներգործուն) մեթոդ,,պատկերի և տեքստի հա-

մադրում հնարք , խթանող հարցում, Т-աձև աղյուսակ

Միջառարկայական կապ-հայագիտություն, հնագիտություն, աշխարհագրություն,պատ-

մություն, դիցաբանություն

Դասի ընթացքը-պրիզմա մեթոդով խթանել դասը:Դասարանը բաժանել 4 խմբի:

1-ին խմբին տալ հետևյալ հարցերը:
Ո՞վ էր Տիր աստվածը Հայոց դիցարանում, որտե՞ղ էր գտնվում նրա տաճարը:/ Պատկերի և տեքստի համադրում հնարը/
Ի՞նչ գիտեք հեթանոսական դպրության մասին:
2-րդ խմբին տալ հետևյալ հարցերը:
Ի՞նչ գիտեք նախամաշտոցյան գրերի մասին, քանի՞ տեսակ են եղել, Ինչու են կոչվել/մեհենական/:
3-րդ խմբին տալ հետևյալ հարցերը:
Ինչու՞ է Դանիել անունով ասորի եպիսկոպոսը հողի տակ տաքցրել հայերեն մեհենագրերը:Քրիստոնեություն ընդունումից հետո ինչու՞ ոչնչացվեց մեհենական մշակույթը:
4-րդ խմբին տալ հետևյալ հարցերը:
Հայ և օտարազգի պատմիչները ի՞նչ են վկայել նախամաշտոցյան գրերի մասին:Հնագիտական ի՞նչ փաստեր կան նախամաշտոցյան գրերի մասին /Պատկերի և տեքստի համադրում/

Կշռադատման փուլ-Т-աձև աղյուսակի միջոցով գրել նախամաշտոցյան գրերի մասին փաստերն ու վկայությունները:

Ամփոփում-Ամփոփման ժամանակ գրատախտակին գրում եմ հետևյալ վիճահարույց հարցերը՝ստուգելու համար աշակերի հայրենասիրության զգացողության ընկալումը:
1.Մաշտոցից առաջ եղե՞լ են հայերեն նշանագրեր: Արդյո՞ք Մաշտոցը այդ նշանագրերը չի կատարելագործել, թե՞ բոլորովին նորն է ստեղծել:

2.Արդյոք՞ Մաշտոցը չի օգտվել մեհենական համակարգից:
3.Մաշտոցը 3 տարի ճգնել է Սյունյաց քարանձավներում:Սյունիքը հայտնի է շատ սեպագրերով: Ճի՞շտ է ,որ Մաշտոցը տեսիլքի ժամանակ սեպագրեր է տեսել և մշակել:
Գնահատել պատճառաբանված:Գնահատել խմբերին և աշակերտներին:
Տնայի աշխատանք հանձնարարել -ընթերցել Խորենացու <<Հայոց պատմություն>>մատյանը:



Նկար 1 ժայռապատկերներ



մեհենական սեպագիր արձանագրություններ /նկար 2/

հսկայանշաններ /նկար 3/

/նկար 4/սահմանաքարեր

/նկար 5/ մեհենագրեր

6.

/նկար 6/ .դրամներ